

06-ը **փետրվարի** 2012 թվականին տեղի ունեցավ **Լիճք** համայնքի ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում էին 242 բնակիչներ: Ժողովին ներկա էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար **Ս. Խլղաթյանը**:

Ժողովի նախագահ՝ **Գ. Գրիգորյան**

Քարտուղար՝ **Լ. Աղաբեկյան**

Օրակարգ

1. **Լիճք** համայնքի ղեկավարի հաշվետվությունը մեկ տարում կատարած աշխատանքների մասին:

/Չեկ. **Գ. Գրիգորյան**/

2. 2012 թ.-ի համայնքի հրատապ լուծում պահանջող խնդիրները:

/Չեկ. **Գ. Գրիգորյան**/

Համայնքի ղեկավար **Գ. Գրիգորյանը** ժողովի մասնակիցներին մանրամասն ներկայացրեց 2011 թ.-ի ընթացքում կատարված աշխատանքների մասին, որոնք նպաստել են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

2011 թ.-ին 95.5 %-ով կատարվել է համայնքի բյուջեն: Կատարված բյուջեի շնորհիվ համայնքում իրականացվել են համայնքին վերաբերվող կենսական նշանակության խնդիրներ.

- ա) Իրականացվել է համայնքում գյուղամիջյան ճանապարհների փոսալցման աշխատանքներ:
- բ) Փողոցային լուսավորության աշխատանքներ:
- գ) Իրականացվել է աղբահանման, ձնամաքրման և շուրջօրյա խմելու ջրամատակարարման աշխատանքներ:
- դ) Կատարվել են համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման առվի վերանորոգման և մաքրման աշխատանքներ:
- ե) Մշակույթի տան շինարարության աշխատանքները իրականացվել են ծրագրով՝ 58 մլն. դրամ:
- զ) Չայիրների չորացման և դրենաժավորման աշխատանքները իրականացվել են ծրագրով՝ 55 մլն. դրամի:
- է) Աշնանացան ցորենի նոր տեսակի սերմացուի ներմուծման շնորհիվ ընդարձակվել են աշնանացանի ցանկատարածությունները:
- Ը) Համայնքի բարերարների միջոցներով շարունակվում են եկեղեցու կառուցման աշխատանքները:
- Թ) իրականացվել է գյուղամիջյան խմելու ջրագծի խողովակների 1 կմ վերակառուցում:
- Լ) Նախադպրոցական երեխանների մանկապարտեզ կազմակերպելու համար տրամադրվել է 1 420 000 դրամ:
- Ի) Գյուղի պարզեցված հատակագծի գեն պլան նախագծման աշխատանքների համար ծախսվել է 10 մլն. դրամ:

Այնուհետ համայնքի ղեկավարը ժողովի մասնակիցներին ներկայացրեց 2012թ.-ին համայնքում հրատապ լուծում պահանջող խնդիրները:

- ա) Խմելու ջրագծի կառուցում 1 կմ – 10 մլն. Դրամ
- բ) Ճանապարհի փոսալցում:
- գ) Տրակտորի ձեռք բերում:
- դ) Փողոցային Լուսավորության կառուցման շարունակում:
- ե) Խմելու ջրագծի Ա-3 և Ա-2 թաղամասերի խմելու ջրագծի նորոգում 950 մետր:
- զ) Գլխավոր ճանապարհի ասֆալտապատում :
- է) Ամբուլատորիայի և մանկապարտեզի կառուցում:
- ը) Հիմնական դպրոցի նոր շենքի կառուցում: Այժմյան շենքը կառուցվել է 1936թ, գտնվում է վթարային վիճակում:
- թ) Մշակույթի տան շինարարական աշխատանքների ավարտում:
- ժ) Խմելու ջրի ջրամբարի և ներքին ցանցի կառուցումը:

Համայնքի ղեկավարն անդրադարձավ համայնքում սոցիալ- տնտեսական և գյուղատնտեսության զարգացման առկա խնդիրներին և քննադատաբար մոտեցավ համայնքի այն բնակիչներին, որոնք ժամանակին չեն կատարել իրենց հարկային պարտականությունները:

Ժողովում ելույթ ունեցան համայնքի բնակիչներ՝ Դ. Ղուկասյանը, Հ. Պապոյանը, ավագանու անդամ Հ. Հակոբյանը:

Համլետ Հակոբյանը մասնավորապես նշեց հետևյալ հարցերը՝

1. Գլխավոր հատակագծի համար 10 մլն դրամը ում նախաձեռնությամբ է նկարված:
2. Ամբուլատորիան կկառուցվի թե ոչ:
3. Ում նախաձեռնությամբ է կուլտուրայի տան դահլիճը երկաթով կառուցվել, առանց առաստաղի:
4. Սեփականության վկայական չի տրվել 600 բնակչի, ստանալու համար պահանջում են գումար մուծել կադաստրում:
5. Համայնքի էլեկտրոէներգիայի վոլտ միավորը 140 վոլտ է, լույս չենք տեսնում, փոխարենը էլեկտրոցանցը Լիճքի պոմպակայանի սնուցումը միացրել է համայնքի էլեկտրոցանցից, որը անթույլատրելի է:

Ժողովում ելույթ ունեցողները բոլորի անունից հավանության արժանացրին համայնքում կատարած աշխատանքները և համայնքի ղեկավարի մեկ տարվա կատարված աշխատանքները գնահատվեց բավարար:

Ժողովի նախագահ՝

Գ. Գրիգորյան

Քարտուղար՝

Լ. Աղաբեկյան

Լիճքի գյուղապետարանի 2011թ-ի տարեկան հաշվետվություն

Ձեկուցում է համայնքի ղեկավար Գ. Գրիգորյանը:

Համայնքի 2011թ բյուջետային մուտքերը

հհ	Եկամուտի անվանումը	պլան	փաստացի	%
1	Հողի հարկ	10605.6	9965.5	94.0
2	Որից համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի հանար	10605.6	9965.5	94.0
3	Գույքահարկ այլ գույքից	8986.3	9065.1	100.9
4	Որից Շենք շինություններից	21.0	157.7	751.0
5	Տրանսպորտային միջոցներից	8965.3	8907.4	99.4
6	Տեղական տուրքեր / խանութներից, բենզա-գազալցակայաններից/	1360.0	555.4	40.8
7	Գույքի վարձակալությունից եկամուտներ ընդամենը	1935.0	1906.8	98.5
8	Որից Հողի վարձավճար	1040.0	689.5	66.3
9	Արտի վարձավճար	895.0	1217.3	136.0
10	Պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետբյուջեից ստացվող միջոցներ	1200.0	600.0	50.0
11	Տեղական վճարներ/մրցույթների անցկացման համար մուտքի վճար/	60.0	157.9	263.2
12	Առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող վճարներ / ջրի վարձավճար/	3670.0	1977.7	53.9
13	Վարչական իրավախաղտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ/երկթաղաքացիություն/	450.0	510.0	113.3
14	Պետբյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբնունքով տրամադրվող դոտացիա	61654.4	61654.4	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	89921.3	86392.8	96.1
	Այդ թվում՝ սեփական եկամուտներ	27066.9	24138.4	89.2

Համայնքի բյուջեի մուտքերի 20.0%-ը՝ 17900.0 հազար դրամ հատկացվել է վարչական բյուջեի պահուստային ֆոնդին:

Պահուստային ֆոնդից 5500.0 հազ. դրամի չափով՝ Համայնքի ավագանու որոշումներով հատկացվել է համայնքի կարիքավորներին օգնելու համար, հողված 4729: Օգնություն է տրամադրվել համայնքի 90 –ից ավել կարիքավորների:

Համայնքի 2011թվականի բյուջեյի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների

Տնտեսագիտական դասակարգման	հոդվածը	գումար	
---------------------------	---------	--------	--

հողվածի անվանումը		ընդամենը	
Աշխատողների աշխատավարձ	4111	40461.3	39754.1
Սոցիատկացում	4131	7582.1	7208.3
Պարգևատրում	4112	1370.0	1323.0
Բանկային ծառայություններ	4211	30.0	30.0
Էներգետիկ ծառայություններ, ջեռուցում	4212	1700	1483.6
Աղբահանում	4213	900.0	900.0
կապի ծառայություն	4214	970.0	841.9
Ապահովագրություն՝ վարչական շենքի	4215	50.0	0
Ներքին գործուղման ծախսեր	4221	1000.0	199.0
համակարգչային ծառայություններ	4232	342.0	246.4
Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	120.0	0.0
Տեղեկատվական ծառայություններ, հեռ. հայտարարություններ	4234	590.0	590.0
Գյուղ. խորհրդատվական ծառայություն	4235	50.0	50.0
Գազասպառ. համակար. տեխ. սպասարկում	4241	170.0	170.0
Հողերի ագրոքիմիական ծառայություններ	4241	100.0	100.0
Ջրագծի ընթացիկ նորոգում	4251	3397.9	0
ճանապարհների ձնամաքում	4251	700.0	700.0
ճանապարհների փոսալցում և հարթեցում	4251	7020.0	7018.2
Ավտոմեքենայի ընթացիկ նորոգում	4252	230.0	230.0
Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	750.0	750.0
Տրանսպորտային նյութեր /բենզին/	4264	1872.0	1591.0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	580.0	360.0
Հատուկ նպատակայինայլ նյութեր/մշակույթի տուն/	4269	120.0	0
Նախադպրոցական կրթություն	4637	1421.0	1421.0
Նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/միջհամայնքային անդամավճար/	4819	450.0	450.0
Այլ հարկեր՝ բնապահպանական հարկ	4822	45.0	37.5
Պահուստային միջոցներ /օգնություններ/	4729	5500.0	5500.0
Տրանսպորտային սարքավորումներ	5121	5400.0	0
Ջրագծի կապիտալ նորոգում	5113	7538.8	7537.7
Վարչական սարքավորումներ/հեռախոս/	5122	240.0	91.5
Համայնքի գլխավոր հատակագիծ	5133	10000.0	10000.0
Նախագծահետազոտական ծախսեր	5134	500.0	450.0
Ընդամենը, որից	X	101200.1	89033.2
Վարչական մաս	X	89921.3	81404.0
Ֆոնդային մաս	X	11278.8	7629.2

Վարչական բյուջեյի տարեվերջյան մնացորդը կազմում է 2357658 դրամ, որը փոխանցվել է 2012թ-ի ֆոնդային բյուջե: Ֆոնդային բյուջեյի տարեվերջյան մնացորդը՝ 4208256 դրամ նույնպես փոխանցվել է 2012թ ֆոնդային բյուջե: Ընդամենը 6565914 դրամ:

Նախորդ տարիների պարտքերի վերաբերյալ

1. Հողի հարկի պարտք..... 22358125 դրամ
 2. Ջրի վարձի պարտք.....1218711 դրամ
 3. Հողի վարձավճարի պարտք516053 դրամ
 4. Տեղական տուրքերի պարտք.....896000 դրամ
 5. Արտոի և խոտհարկի վարձավճարի պարտք 580000 դրամ
- Ընդամենը պարտք **25568889 դրամ**

Գյուղապետ՝

Գ. Գրիգորյան